



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 75-Ա/2

06.02.2017թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
/ՀԱՎԱՍՏԱԳԻՐ/ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N 393-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի փետրվարի 2-ի N 65-Ա/2 հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու համար վերապատրաստումներ իրականացնելու համար երաշխավորել հետևյալ կազմակերպություններին.

- 1) <<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ
- 2) <<Մանկավարժական նախաձեռնություն>> հայկական ասոցիացիա
- 3) <<Կրթություն առանց սահմանի>> ՀԿ
- 4) <<Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ շրջանառու հիմնադրամ>>
- 5) <<Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամ
- 6) <<Հույս և ապագա>> երեխաների աջակցության և զարգացման բարեգործական ՀԿ:

2. Հանձնարարել նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Ա.Բաղդասարյանին՝ պաշտոնապես հրապարակել ընտրության արդյունքները:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանին:



ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅԱՆ